ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԴՈՂՍԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ОБЛАСТЬ АРМАВИР
МУНИЦИПАЛИТЕТ
ДОХС

N 29
«04» «04» 2013 թ.

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի մարզպետ
պրն Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Ձեզ ենք ներկայացնում Դողս համայնքի ավագանու 2013 թվականի մարտի 29-ի թիվ 2 հերթական նիստի որոշումները:
Առդիր 10 թերթ:

Դողս համայնքի ղեկավար Մ.Ադամյան

22 ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 3192-13
05 04 2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴՈՂՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29.03.2013թ. թիվ 7

## ԴՈՂՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի ԹԻՎ 2 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով և « Իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով.

ՈՐՈՇԵՑ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դողս գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի մարտի 29-ի թիվ 2 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Դողս համայնքի ավագանիներ

1. Արմեն Ադամյան
2. Աբրահամ Գրիգորյան
3. Արամ Հարությունյան
4. Գերասիմ Սարգսյան
5. Սմբատ Հայրապետյան
6. Վանուշ Համբարձումյան

Դողս համայնքի ղեկավար Մ.Ադամյան

2013թ. մարտի 29
Գ.Դողս

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Դողս գյուղական
համայնքի ավագանու 2013 թվականի
մարտի 29-ի թիվ 7 որոշման

ՕՐԱԿԱՐԳ

1. Դողս գյուղական համայնքի 2013 թվականի համար ընդունված բյուջեում փոփոխություններ կատարելու մասին: Զեկուցող՝ Մ.Ադամյան:
2. Հայրենական Մեծ Պատերազմում զոհվածների այրիներին և Արցախյան ազատամարտի մասնակիցներին մեծարելու և նյութական օժանդակություն ցուցաբերելու մասին: Զեկուցող՝ Մ.Ադամյան:
3. Դրամական օգնություն հատկացնելու մասին: Զեկուցող՝ Մ.Ադամյան:
4. Այլ հարցեր: Զեկուցող՝ Մ.Ադամյան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴՈՂՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ու Մ

29.03.2013թ. թիվ 8-Ն

## ԴՈՂՍ ՀԱՄՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 9 ՆԻՍՏԻ ԹԻՎ 42-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, « Իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դողս գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 42-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները:

1/ *Բյուջեի եկամուտներ հատված.*

ա/ Պաշտոնական դրամաշնորհներ 1200-րդ տողի <14668.3 >թիվը փոխել <14666.8> թվով

բ/ Գույքահարկ փոխադրամիջոցների համար 1112-րդ տողի 1794.0 թիվը փոխել <1795.5 >թվով

2/ *Բյուջեի ծախսային հատվածներում կատարել հետևյալ փոփոխությունները.*

Վարչական բյուջեի պահուստային ֆոնդը1265.5 /Մեկ միլիոն երկու հարյուր վաթսունհինգ հազար հինգ հարյուր/ դրամը բաշխել հետևյալ կերպ

01.1.1 *Տեղական ինքնակառավարման ծրագիր*

4251-- շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում հոդվածին ավելացնել 215.5/երկու հարյուր տասնհինգ հազար հինգ հարյուր / դրամ

4252—Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում հոդվածին ավելացնել 50.0/ հիսուն հազար /դրամ

*10.7.1. Սոցիալական պաշտպանություն ծրագիր*

4729.- Այլ նպաստներ բյուջեից հոդվածին ավելացնել 1000.0/ Մեկ միլիոն / դրամ :

*Համայնքի բյուջեի միջոցների տարեկան հավելուրդը ,որը կազմում է վարչական մասով՝ 598.3 /հինգ հարյուր իննսունութ հազար երեք հարյուր/դրամ,իսկ ֆոնդային մասով 697.3/վեց հարյուր իննսունյոթ հազար երեք հարյուր/ դրամ ընդամենը 1295.6/մեկ միլիոն երկու հարյուր իննսունհինգ հազար վեց հարյուր/ դրամը ամբողջությամբ ուղղել համայնքի բյուջեի ֆոնդային մաս և կատարել բաշխում հետևյալ կերպ*

*01.1.1Տեղական ինքնակառավարման ծրագիր*

*5122-Վարչական սարքավորումներ հոդվածին տրամադրել 235.6/երկու հարյուր երեսունհինգ հազար վեց հարյուր/ դրամ*

*08.2.3- Մշակույթային ծրագիր*

5132- այլ ակտիվների ձեռք բերում հոդվածին տրամադրել 60.0/վաթսուն հազար/ դրամ

*04.5.1 Ճանապարհային տրանսպորտ ծրագիր*

5113-շենքերի և կառույցների կապիտալ նորոգում հոդվածին տրամադրել 1000.0/մեկ միլիոն/ դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Դողս համայնքի ավագանիներ

1. Արմեն Աղամյան

2. Աբրահամ Գրիգորյան

3. Արամ Հարությունյան

4. Գերասիմ Սարգսյան

5.Սմբատ Հայրապետյան

6. Վանուշ Համբարձումյան

Դողս համայնքի ղեկավար Մ. Աղամյան

2013թ. մարտի 29

Գ.Դողս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴՈՂՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29.03.2013թ. թիվ 9

### ԴՐԱՄԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով , հիմք ընդունելով ավագանու անդամ Արամ Հարությունյանի առաջարկությունը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հատկացնել նյութական օժանդակություն Հայրենական Մեծ պատերազմում զոհվածների այրիներին և Արցախյան ազատամարտի մասնակիցներին՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Դողս համայնքի ավագանիներ

1. Արմեն Աղամյան
2. Աբրահամ Գրիգորյան
3. Արամ Հարությունյան
4. Գերասիմ Սարգսյան
5. Սմբատ Հայրապետյան
6. Վանուշ Համբարձումյան

Դողս համայնքի ղեկավար Մ.Աղամյան

2013թ. մարտի 29
Գ.Դողս

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Դողս գյուղական
Համայնքի ավագանու 2013 թվականի
մարտի 29-ի թիվ 9 որոշման

# ՆՅՈՒԹԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Լաուրա Աղամյան՝ Հայրենական Մեծ պատերազմի զոհվածի այրի, 70 հազար դրամ:
2. Մարուշ Սկրտչյան ՝ Հայրենական Մեծ պատերազմի զոհվածի այրի, 70 հազար դրամ:
3. Մուշեղ Արսենյան՝ Արցախյան ազատամարտի մասնակից, 70 հազար դրամ:
4. Վարդան Անտոնյան՝ Արցախյան ազատամարտի մասնակից, 70 հազար դրամ:
5. Սերժիկ Հայրապետյան՝ Արցախյան ազատամարտի մասնակից, 70 հազար դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴՈՂՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29.03.2013թ. թիվ 10

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով .

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հատկացնել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Դողս համայնքի ավագանիներ

1. Արմեն Ադամյան
2. Աբրահամ Գրիգորյան
3. Արամ Հարությունյան
4. Գերասիմ Սարգսյան
5. Սմբատ Հայրապետյան
6. Վանուշ Համբարձումյան

Դողս համայնքի ղեկավար Մ.Ադամյան

2013թ. մարտի 29
Գ.Դողս

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Դողս գյուղական
համայնքի ավագանու 2013 թվականի
մարտի 29-ի թիվ 10 որոշման

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Արևշատ Զաքարյանին՝ 95 հազար / իննսունհինգ հազար/ դրամ, առողջական խնդիրների բարելավման համար:
2. Սեյրան Գրիգորյանին՝ 95 հազար / իննսունհինգ հազար/ դրամ, առողջական խնդիրների բարելավման համար:
3. Արթուր Հասրաթյանին՝ 95 հազար / իննսունհինգ հազար/ դրամ, բուժման նպատակով բժշկի դիմելու համար:
4. Հայրապետ Գալստյանին՝ 90 հազար / իննսուն հազար/ դրամ, բուժման նպատակով բժշկի դիմելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴՈՂՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29.03.2013թ. թիվ 11

## ՎԱՀՐԱՄ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վահրամ Մարտիրոսյանի ընտանիքի սոցիալական վիճակը համարել բավարար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Դողս համայնքի ավագանիներ

1. Արմեն Ադամյան
2. Աբրահամ Գրիգորյան
3. Արամ Հարությունյան
4. Գերասիմ Սարգսյան
5. Սմբատ Հայրապետյան
6. Վանուշ Համբարձումյան

Դողս համայնքի ղեկավար Մ.Ադամյան

2013թ. մարտի 29
Գ.Դողս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴՈՂՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29.03.2013թ. թիվ 12

## ՕՎՍԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Մերժել Օվսաննա Հարությունյանի խնդրանքը՝ 04-038-001-001 տնամերձին կից խողովակ- անցում կառուցելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Դողս համայնքի ավագանիներ

1. Արմեն Աղամյան
2. Աբրահամ Գրիգորյան
3. Արամ Հարությունյան
4. Գերասիմ Սարգսյան
5. Սմբատ Հայրապետյան
6. Վանուշ Համբարձումյան

Դողս համայնքի ղեկավար Մ.Աղամյան

2013թ. մարտի 29
Գ.Դողս